Գլխավոր տեղեկություն	
Номер	N 1294-Ն
Տիպ	Որոշում
Тип	Официальная Инкорпорация (05.04.2012-28.03.2013)
Статус	Չի գործում
Первоисточник	ՀՀՊՏ 2002.09.18/40(215) Հոդ.912
Принят	ՀՀ կառավարություն
Дата принятия	25.07.2002
Подписан	ՀՀ վարչապետ
Дата подписания	23.08.2002
Վավերացնող մարմին	ՀՀ Նախագահ
Վավերացման ամսաթիվ	30.08.2002
Дата вступления в силу	28.09.2002
Ուժը կորցնելու ամսաթիվ	10.11.2016

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
30 օգոստոսի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հուլիսի 2002 թվականի N 1294-Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի ՆՀ-1064 հրամանագրով հաստատված կարգի 4-րդ կետը և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 6-ի N 198 որոշման 2-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Ստեղծել «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ։

2. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության

կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.
բ) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի.
գ) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը՝ համաձայն N 3 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2002 թ. օգոստոսի 23
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2002 թվականի
հուլիսի 25-ի N 1294-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է քաղաքաշինության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:
2. Նախարարությունն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:
3. Նախարարության լիազորությունները սահմանվում են օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:
4. Նախարարությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:
5. Նախարարությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
6. Նախարարությունը կազմված է նախարարից և նախարարության աշխատակազմից: Նախարարության համակարգում ընդգրկվում են նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններն ու հիմնարկները:
7. Նախարարության գործունեության նպատակը ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավման, ինչպես նաև քաղաքաշինական համակարգերի անվտանգության ապահովման համար պայմանների ստեղծումն է՝ քաղաքաշինության քաղաքականության մշակման, իրականացման, համակարգման և արդյունքների գնահատման միջոցով:
8. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության քաղաքականության հիմնական ուղղությունների մշակման բնագավառում նախարարության խնդիրներն են՝
1) երկրի տարաբնակեցման համակարգի հավասարակշռման, տարածաշրջանային զարգացման անհամամասնությունների հաղթահարման, բազմակենտրոն տարածական զարգացման պայմանների ապահովումը.
2) քաղաքաշինական համակարգերի անվտանգության և հարատև զարգացման ապահովումը՝ ներառյալ ներդաշնակ կենսատարածքի ձևավորումը և բնակչության տարածքային համաչափ բաշխվածության համար նախադրյալների ստեղծումը.
3) անկառավարելի ուրբանիզացման հնարավոր սպառնալիքների չեզոքացումը.
4) բնակավայրերի կայուն զարգացման խթանումը, դրանց ինքնատիպության, գրավչության բարձրացումը, պատմամշակութային միջավայրերի քաղաքաշինական վերազարգացումը (ռեաբիլիտացիա).
5) «կանաչ քաղաքաշինության» սկզբունքի ձևավորումը, բնական և մշակութային լանդշաֆտների ներդաշնակ փոխլրացնող զարգացման ապահովումը.
6) ազգային ճարտարապետության հոգևոր ու մշակութային ավանդույթների պահպանումը, դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
7) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում բարձրարժեք կառուցապատման միջավայրի ստեղծման ու զարգացման պայմանների ապահովումը.
8) հողային պաշարների պետական կառավարումը՝ բնակավայրերի, ինչպես նաև կառուցապատման համար նախատեսված այլ հողերի՝ սահմանված կարգով օգտագործման մասով.
9) քաղաքաշինության ոլորտում գործարար միջավայրի բարելավումը և մրցակցային դաշտի ձևավորումը, ներդրումային նախաձեռնությունների խրախուսումը և ներդրումների

պաշտպանությունը.
10) բնակարանային պայմանների բարելավման սահմանադրական իրավունքի իրագործման, բազմաբնակարան շենքերի պահպանման, անվտանգ շահագործման և կառավարման մարմինների կարողությունների հզորացման, ինչպես նաև կոմունալ ենթակառուցվածքների զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը.
11) քաղաքաշինության ոլորտի գիտական, տեխնիկական զարգացումը և նորարարության խթանումը.
12) շենքերի և շինությունների սեյսմակայունության, վտանգավոր երկրաբանական երևույթներից դրանց ինժեներական պաշտպանության ապահովումը.
13) շինարարության զարգացման և իրականացման, շինարարական արտադրանքի և ծառայությունների որակական չափանիշների բարձրացման, տեխնոլոգիաների արդիականացման պայմանների ապահովումը.
14) քաղաքաշինության ոլորտում պետական և համայնքների բյուջեների հաշվին իրականացվող աշխատանքների գնագոյացման սկզբունքների ձևավորումը.
15) կառույցների շինարարության և շահագործման ընթացքում մարդկանց ու միջավայրի անվտանգության, քաղաքաշինական գործունեության սուբյեկտների կողմից ոլորտը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողությունը.
16) ոլորտում ծառայությունների որակի բարձրացման, սպառողների իրավունքների պաշտպանության նպատակով քաղաքաշինական գործունեության առանձին տեսակների լիցենզավորումը.
17) քաղաքաշինական տեղեկատվական համակարգի ձևավորումը, Հայաստանի Հանրապետության տարածքի քաղաքաշինական կադաստրի վարումն ու կադաստրային տվյալների ամփոփումը.
18) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ խնդիրների իրականացումը:

II. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Նախարարությունն իր նպատակի և խնդիրների իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝
1) պետական քաղաքաշինական քաղաքականության հիմնադրույթների, տարածական զարգացման ծրագրերի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ.
2) քաղաքաշինության ոլորտի զարգացումն ապահովող ու գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնելը, նախարարության գործունեությանն առնչվող իրավական ակտերի կիրառման պրակտիկայի ընդհանրացում, դրանց կատարելագործման վերաբերյալ սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնելը.
3) ազգային և տարածաշրջանային (միկրոտարածաշրջանային) մակարդակների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում.
4) համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի մշակման աշխատանքների համակարգում, տարածքների և բնակավայրերի կայուն քաղաքաշինական զարգացման ռազմավարության մշակում.
5) հանրապետության և առանձին վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն, գործառական այլ համակարգերի տարածքային կազմակերպման, ինչպես նաև արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման, պատմամշակութային ու բնության հատուկ պահպանվող տարածքներ ներառող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում.
6) հանրապետությունում քաղաքաշինական իրադրության և զարգացման միտումների հետազոտում, կարճաժամկետ, միջնաժամկետ և հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունների վերլուծում, բացահայտում ու նախանշում.
7) քաղաքաշինական և լանդշաֆտային համակարգերի ներդաշնակեցման ծրագրերի, տարածական պլանավորման նորմերի ու կանոնների, ինչպես նաև տարբեր գործառական տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչների մշակում.
8) քաղաքների էկոլոգիական վիճակի բարելավմանը, շրջակա միջավայրի վրա ուրբանիզացիայի բացասական հետևանքների նվազեցմանը նպատակաուղղված, ինչպես նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացման (ադապտատիվ) տարածական զարգացման ծրագրերի մշակում.
9) բնակավայրերի պատմաճարտարապետական միջավայրի քաղաքաշինական վերականգնման ու զարգացման ծրագրերի մշակում և դրանց մոնիթորինգի իրականացում.
10) տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների ծրագրերի և զարգացման ծրագրերի՝ քաղաքաշինական փաստաթղթերին առնչվող մասով սահմանված կարգով համաձայնեցում.
11) կառուցապատման համար նախատեսված հողերի քաղաքաշինական

սահմանափակումների և նորմերի սահմանում.
12) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման առաջադրանքների և նախագծային փաստաթղթերի՝ սահմանված կարգով համաձայնեցում և վերջիններս Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը.
13) քաղաքաշինական նպատակով հողամասերի հատկացումների վերաբերյալ առաջարկությունների, ճարտարապետահատակագծային առաջադրանքների ու ճարտարապետաշինարարական նախագծերի՝ սահմանված կարգով համաձայնեցում.
14) ճարտարապետության ոլորտի պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի մշակում և դրանց մոնիթորինգի իրականացում.
15) քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների առանձնացման և գործունեության կարգի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների զարգացման ծրագրերի մշակում.
16) բնակարանային ապահովմանը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի պահպանման, շահագործման և կառավարման ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանն ուղղված պետական աջակցության նպատակային ծրագրերի մշակում և դրանց մոնիթորինգի իրականացում.
17) աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման գործընթացի ամփոփում.
18) պետական աջակցության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների բաշխում և հատկացում.
19) կոմունալ ենթակառուցվածքների զարգացման, շենքերի էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման, թափոնների տեղադրման աղբավայրերի (պոլիգոնների) ստեղծման ծրագրերի մշակում.
20) հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման հետ կապված հարցերի կարգավորում.
21) քաղաքաշինության բնագավառի տեխնիկական զարգացման գիտատեխնիկական պետական նպատակային և նորարարությանը նպատակաուղղված ծրագրերի մշակում.
22) շենքերի անձնագրավորման, սեյսմակայունության ուղղությամբ իրականացվող հետազննական, ինչպես նաև գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպում և համակարգում, շինարարությունում դրանց արդյունքների ներդրում.
23) Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերով սահմանված սահմանային հարկայնությունը գերազանցող օբյեկտների նախագծային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննության կազմակերպում.
24) վտանգավոր երկրաբանական երևույթներից քաղաքաշինական օբյեկտների պաշտպանության ծրագրերի մշակում և դրանց մոնիթորինգի իրականացում.
25) բնագավառի հանրապետական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման, հաստատման (բացի ազգային ստանդարտներից), ինչպես նաև միջպետական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ընդունման և Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց գործարկման գործընթացի վարում և համակարգում.
26) բնագավառի ստանդարտացման գործընթացի վարում, ինչպես նաև ոլորտի սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների գնահատման և դրանց հավատարմագրման աշխատանքներում համապատասխան փորձագետների ներգրավվածության ապահովում.
27) շինարարության ոլորտի պետական քաղաքականության, զարգացման ծրագրերի մշակում և դրանց մոնիթորինգի իրականացում.
28) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող քաղաքաշինական ծրագրերի պատվիրատուի գործառույթների կատարում.
29) հանրապետության սոցիալ-տնտեսական և տարածքային զարգացման, ինչպես նաև ճյուղային պետական նպատակային ծրագրերի մշակում՝ քաղաքաշինության բնագավառին առնչվող մասով.
30) ոլորտին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի նախապատրաստման, միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության և միջազգային պայմանագրերին (համաձայնագրերին) միանալու նպատակով իրականացվող աշխատանքներին, Հայաստանի Հանրապետության անդամակցության և միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների իրագործմանը մասնակցություն.
31) նախարարության տեղեկատվական քաղաքականության, հասարակայնության հետ կապերի ապահովման կազմակերպում ու իրականացում և մասնագիտական, հասարակական և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն.
32) օրենսդրական ակտերով սահմանված այլ լիազորությունների իրականացում.
33) քաղաքացիական պաշտպանության ոլորտում՝
ա. կազմակերպում է նախարարության համակարգի աշխատողների պաշտպանությունը,
բ. ստեղծում է քաղաքացիական պաշտպանության ծառայություններ.
34) զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ոլորտում՝
ա. ապահովում է նախարարության համակարգի զորահավաքային նախապատրաստության միջոցառումների իրականացման և համակարգման

աշխատանքները,

բ. մշակում է նախարարության համակարգի զորահավաքային պլանը և իրականացնում է միջոցառումներ՝ զորահավաքային պլանի կատարումն ապահովելու նպատակով,

գ. իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

(9-րդ կետը լրաց. 25.08.11 N 1234-Ն)

III. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. Նախարարությունը կառավարում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարը (այսուհետ՝ նախարար), որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի առաջարկությամբ: Նախարարն ունի տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ խորհրդակցելով նախարարի հետ:

11. Նախարարն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

12. Նախարարն իրականացնում է նախարարությանը վերապահված խնդիրներն ու գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող վիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար:

13. Նախարարը հաշվետու է Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հայաստանի Հանրապետության վարչապետին:

14. Նախարարը՝

1) իր իրավասության սահմաններում ընդունում և օրենքով սահմանված կարգով հրապարակում է գերատեսչական իրավական ակտեր.

2) ղեկավարում է նախարարության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է նախարարության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

3) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառներին, նպատակներին ու խնդիրներին համապատասխան՝ առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն.

4) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության կամ նախարարության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության կամ նախարարության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոններում, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

6) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է իր խորհրդականներին, մամուլի քարտուղարին ու օգնականներին.

7) օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան՝ սահմանում է նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունների սահմանները.

8) սահմանում է աշխատանքի բաշխումն իր տեղակալների միջև.

9) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորության սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում նախարարության աշխատակազմի ղեկավարի, նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների, ինչպես նաև նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրություններն ու ցուցումները.

10) լսում և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի գործունեության մասին տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում նախարարության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները.

11) իրականացնում է վերահսկողություն նախարարության աշխատակազմին ամրացված պետական սեփականության պահպանության ու օտարման նկատմամբ.

12) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը.

13) Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատողների թիվը.

14) օրենքով սահմանված դեպքերում և կարգով շնորհում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության դասային աստիճաններ.

15) իր լիազորության սահմաններում հիմնում է գերատեսչական պարգևներ.

16) ստեղծում է խորհրդակցական մարմիններ.
17) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:
15. Նախարարի բացակայության դեպքում, նրա հանձնարարությամբ, նախարարի պարտականությունները կատարում է նախարարի տեղակալներից մեկը:
16. Նախարարի տեղակալը՝
1) համակարգում է նախարարության համակարգի աշխատանքները՝ նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման՝ իրեն հանձնարարված բնագավառներում.
2) իր լիազորության սահմաններում համակարգում է նախարարության՝ իրեն հանձնարարված բնագավառներում քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ աշխատանքները՝ նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով, տալով ցուցումներ ու հանձնարարականներ.
3) նախարարության նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է իրեն հանձնարարված բնագավառների՝ նախարարության համակարգի մարմիններին որոշակի հանձնարարականները և առաջադրանքները, դրանց կատարման նկատմամբ իրականացնում վերահսկողություն.
4) նախարարի հանձնարարությամբ իրականացնում է նախարարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.
5) համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարության համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.
6) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.
7) իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.
8) պարբերաբար նախարարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին.
9) ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում նախարարի հրամանների ու ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին.
10) նախարարին և աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ նրանց իրավասություններին վերաբերող հարցերի մասին.
11) նախարարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:
17. Նախարարի տեղակալներից մեկը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության գլխավոր ճարտարապետ:
18. Նախարարն ունի խորհրդականներ, մամուլի քարտուղար և օգնականներ, որոնց միջև սահմանում է պարտականությունների բաշխումը:
19. Նախարարության առջև դրված խնդիրներն ու գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով նախարարին կից ստեղծվում է կոլեգիա: Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին կից կոլեգիան՝
1) օժանդակում է նախարարության գործունեության ռազմավարական պլանավորման, քաղաքական որոշումների ընդունման, միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացներին.
2) նպաստում է ռազմավարական ծրագրերի իրականացմանը, գնահատմանը և այդ գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը.
3) մշակում և ներկայացնում է նախարարության կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ:

IV. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

20. Նախարարության աշխատակազմի նպատակը և խնդիրը (այդ թվում՝ նրա կազմում գործող գործակալությունների ու տեսչությունների)՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նախարարության մասնակցության ապահովումն է:
21. Նախարարության աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որպես պետական կառավարչական հիմնարկ, ենթակա է հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:
22. Նախարարության աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների և իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
23. Նախարարության աշխատակազմն իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

24. Նախարարության աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

25. Նախարարության աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

26. Նախարարության աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Նախարարության աշխատակազմի կատարած գործառնությունների և մատուցած ծառայությունների դիմաց կարող է գանձվել միայն պետական տուրք՝ օրենքով սահմանված չափով և կարգով:

27. Նախարարության աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Նախարարության աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև նախարարության լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

28. Նախարարության աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը:

29. Նախարարության աշխատակազմի անվանումն է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ:

30. Նախարարության աշխատակազմի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3:

V. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

31. Նախարարության աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքներով ձեռք բերված և աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ նախարարության աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

32. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ վերցնելու նախարարության աշխատակազմի գույքը:

33. Նախարարության աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով ու իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տնօրինելու և տիրապետելու իր գույքը:

VI. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

34. Նախարարության աշխատակազմի կառուցվածքում ներառվում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները (վարչություններ, բաժիններ, քարտուղարություն) և առանձնացված ստորաբաժանումները (գործակալություններ, տեսչություններ):

35. Նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է նախարարը:

36. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ նախարարի ներկայացմամբ:

37. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն օրենքով, իսկ առանձին դեպքերում՝ նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ծառայությունների մատուցման, վերահսկողական գործառույթներ և պատասխանատվության միջոցներ կիրառող մարմին է:

38. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն իրականացնում է նաև նախարարության աշխատակազմի առանձին գործառույթները կամ դրանց մի մասը և հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից:

39. Առանձնացված ստորաբաժանումն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

40. Նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և նախարարության աշխատակազմի ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

VII. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

41. Նախարարության աշխատակազմի կառավարումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությունը և նախարարը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ

իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:
42. Նախարարության աշխատակազմը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ղեկավարը:
43. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝
1) վերակազմակերպում և դադարեցնում է նախարարության աշխատակազմի գործունեությունը.
2) հաստատում է նախարարության աշխատակազմի կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները.
3) որոշում է նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.
4) հաստատում է նախարարության աշխատակազմի կառուցվածքը.
5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահված այլ լիազորություններ:
44. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով, այլ իրավական ակտերով, նախարարի հրամաններով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է նախարարության աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և պատասխանատվություն կրում օրենքների, այլ իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության կառավարության, նախարարի որոշումների և սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
45. Նախարարության աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Նախարարության աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:
46. Նախարարության աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի, նախարարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները:
47. Նախարարության աշխատակազմի ղեկավարի բացակայության դեպքում նրա փոխարինումն իրականացվում է քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
48. Նախարարության աշխատակազմի ղեկավարը՝
1) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորության սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու համար.
2) օրենքով, այլ իրավական ակտերով, հիմնադրի կողմից և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
3) իր իրավասության սահմաններում տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
4) ապահովում է աշխատակազմում քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.
5) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է նախարարության աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.
6) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ.
7) նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է նախարարության աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը, նախարարի հաստատմանն է ներկայացնում նախարարության աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.
8) նախարարին ներկայացնում է առաջարկություններ նախարարության աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.
9) կազմակերպում է նախարարության բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը.
10) կազմակերպում է նախարարությունում քննարկումների և խորհրդակցությունների անցկացումը.
11) վերահսկում է նախարարության աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը.
12) նախարարի ստորագրությանն է ներկայացնում նախարարի հրամանները և կարգադրությունները.

13) ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ.
14) կազմակերպում է նախարարությունում գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.
15) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ, այդ թվում՝ նաև գլխավոր ֆինանսիստի պարտականությունները:
49. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը ղեկավարում է նախարարության աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները, գործում է նախարարի անմիջական ենթակայությամբ և իրականացնում «Գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իր վրա դրված լիազորությունները:
50. Նախարարության աշխատակազմի գլխավոր ֆինանսիստը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, նախարարության աշխատակազմի ֆինանսական, բյուջետային, հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

VIII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

51. Նախարարության աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:
52. Նախարարության աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման (աուդիտի)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

IX. ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

53. Նախարարության աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:
(Հավելվածը լրաց. 20.01.05 N 30-Ն 07.12.06 N 1756-Ն, 18.12.08 N 1496-Ն, լրաց., փոփ. 04.03.10 N 207-Ն, խմբ. 26.08.10 N 1206-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2002 թվականի
հուլիսի 25-ի N 1294-Ն որոշման

Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

I. Կառուցվածքային ստորաբաժանումներ

Քաղաքաշինության քաղաքականության և տարածական պլանավորման վարչություն
Ճարտարապետության վարչություն
Շինարարության քաղաքականության վարչություն
Բնակարանային քաղաքականության և կոմունալ ենթակառուցվածքների վարչություն
Ինժեներատեխնիկական աշխատանքների և տեխնիկական նորմավորման մեթոդաբանության վարչություն
Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն
Քարտուղարություն
Իրավաբանական բաժին
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին
Արտաքին կապերի բաժին
Անձնակազմի կառավարման բաժին
Առաջին բաժին
Ներքին աուդիտի բաժին

II. Առանձնացված ստորաբաժանումներ

Քաղաքաշինական պետական տեսչություն
«Լիցենզավորման կենտրոն» գործակալություն

(Կառուցվածքը փոփ. 20.01.05 N 31-Ն, խմբ. 16.03.06 N 321-Ն, փոփ. 01.06.06 N 754-Ն, խմբ. 11.10.07 N 1177-Ն, 08.01.09 N 3-Ն, 26.08.10 N 1206-Ն, 02.06.11 N 759-Ն, լրաց. 15.03.12 N 319-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2002 թվականի
հուլիսի 25-ի N 1294-Ն որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Գույքի անվանումը	Քանակը (հատ)	Մեկ միավորի արժեքը (դրամ)	Հաշվեկշռային արժեքը (դրամ)
1	**2**	**3**	**4**	**5**
1.	Օդափոխիչ ԲԿ-1500	1	39 044	39 044
2.	Օդափոխիչ ԲԿ-1500	10	39 183	391 829
3.	Օդափոխիչ ԲԿ-1500	24	481	11 553
4.	Օդափոխիչ ԲԿ-1500	1	41 100	41 100
5.	Օդափոխիչ ԲԿ-2000	2	32 057.5	64 115
6.	Օդափոխիչ ԲԿ-2000	1	35	35
7.	Օդափոխիչ ԲԿ-2500	1	49 556	49 556
8.	Օդափոխիչ ԲԿ-2500	1	48 355	48 355
9.	Օդափոխիչ ԲԿ-2900	1	4 171	4 171
10.	Օդափոխիչ ԲԿ-2500	2	30 685	61 370
11.	Օդափոխիչ ԲԿ-1500	8	769	6 155
12.	Օդափոխիչ ՄԱՅ-244	1	83	83
13.	Օդափոխիչ ՄԱՅ-244	2	30 780	61 560
14.	Օդափոխիչ ՄԱՅ-244	1	83	83
15.	Սառնարան «Սնեժինկա»	3	662	1 986
16.	Սառնարան «Սնեժինկա»	2	2 593	5 186
17.	Սառնարան «Սնեժինկա»	3	378	1 133
18.	Սառնարան «Օրսկ»	2	368	736
19.	Սառնարան «Կոդռի»	1	271	271
20.	Սառնարան «Կոդռի»	1	8 657	8 657
21.	Սառնարան «Չինար»	1	429	429
22.	Սառնարան «Դնեպր»	1	10 196	10 196
23.	Սառնարան «Պամիր»	1	327	327
24.	Սառնարան «Սնայգե»	1	7 672	7 672
25.	Սառնարան «Սվիյագա»	1	11 319	11 319
26.	Սառնարան «Զիլ»	2	589.5	1 179
27.	Սառնարան «Սայր»	1	367	367
28.	Հեռուստացույց «Էլեկտրոն»	1	880	880
29.	Հեռուստացույց «Յանտար»	1	638	638
30.	Հեռուստացույց «Տաուրաս»	1	334	334
31.	Հեռուստացույց «Ռուբին-51»	1	18 753	18 753
32.	Հեռուստացույց «Ֆիլիպս»	1	126 650	126 650
33.	Գրամեքենա			

	«Ռոբոտրոն-24»	3	3 232	9 696
34.	Գրամեքենա «Ռոբոտրոն-202»	1	42 476	42 476
35.	Գրամեքենա «Ռոբոտրոն-20»	1	17 829	17 829
36.	Գրամեքենա «Օպտիմա»	7	270	1 890
37.	Գրամեքենա «Օլիմպիա»	1	552	552
38.	Գրամեքենա «Յատրան»	2	2 739	5 478
39.	Գրամեքենա «Դարո»	1	460	460
40.	Գրամեքենա «Ռոբոտրոն»	10	362	3 619
41.	Գրամեքենա «Ուկրաինա»	1	151	151
42.	Գրամեքենա «Յատրան»	2	3.5	7
43.	Գրամեքենա «Ռոբոտրոն»	1	2	2
44.	Գրամեքենա «Ուկրաինա»	1	130	130
45.	Գրամեքենա «Յունիկս»	1	262	262
46.	Էլեկտրական գրամեքենա	1	15 400	15 400
47.	Մեխանիկական գրամեքենա	1	5 100	5 100
48.	Գրամեքենա «Յանտար»	2	658	1 316
49.	Հաշվիչ մեքենա «Իսկրա III»	2	21 215	42 430
50.	Հաշվիչ մեքենա «Մկ-50»	2	1 784.5	3 569
51.	Հաշվիչ մեքենա «Իսկրա-210»	2	296.5	593
52.	Հաշվիչ մեքենա «Իսկրա»	1	594	594
53.	Հաշվիչ մեքենա «Էլեկտրոնիկա»	1	1 674	1 674
54.	Հաշվիչ մեքենա «Մկ-44»	2	102	204
55.	Հաշվիչ մեքենա «Մկ-22»	1	30	30
56.	Հաշվիչ մեքենա «Էլկա-22»	1	928	928
57.	Հաշվիչ մեքենա «Բիստրիցա»	1	199	199
58.	Հաշվիչ մեքենա «Սիթիզեն»	1	12 800	12 800
59.	Հաշվիչ մեքենա	1	12	12
60.	Հաշվիչ մեքենա «Մկ-52»	9	885	7 964
61.	Հաշվիչ մեքենա «Սվ-49»	2	90.5	181
62.	Հաշվիչ մեքենա	1	50 000	50 000
63.	Հաշվիչ մեքենա «Իսկրա»	3	98	293
64.	Կոմուտատոր «ՈԷդ-20»	1	24 270	24 270
65.	Կոմուտատոր «Կդ-6»	1	14 036	14 036
66.	Կոմուտատոր «Կդ-6»	1	23 208	23 208
67.	Կոմուտատոր «Կդ-6»	1	7 233	7 233
68.	Կոմուտատոր «Կդ-12»	1	9 696	9 696
69.	Կոմուտատոր			

	«Էլետապ-9»	1	103 944	103 944
70.	Կոմուտատոր «Կդ-18»	1	16 354	16 354
71.	Կոմուտատոր «Կդ-12»	1	18 755	18 755
72.	Կոմուտատոր «Կդ-6»	1	14 219	14 219
73.	Կոմուտատոր «ՈԷդ-40»	2	2 476	4 952
74.	Կոմուտատոր «Կդ-18»	2	776.5	1 553
75.	Կոմուտատոր «ՈԷդ-40»	1	2 284	2 284
76.	Կոմուտատոր «Էլետապ-2»	2	442.5	885
77.	Բազմացնող սարք «Էլկա»	1	403.0000	403
78.	Բազմացնող սարք «Կոնիկա-1012»	1	92 917	92 917
79.	Քսերոքս «Ռիկո 5560»	1	23 500	23 500
80.	Քսերոքս	1	4 200	4 200
81.	Քսերոքս «Փանասոնիկ ՖՊ-4080»	1	4 993 800	4 993 800
82.	Յուտակս Ց-110	1	690	690
83.	Էլեկտրական սարք «ՑԲԿ»	1	616 369	616 369
84.	Տելետայպ	1	1 900	1 900
85.	Տելեֆաքս «Բրոթհեր Ինտ Ֆաքս 625»	1	2 520	2 520
86.	Տելեֆաքս «Փանասոնիկ Ֆ-3500»	1	80 797	80 797
87.	Լոտատոր «Ցիկլոս»	1	546	546
88.	Թղթի կտրտման սարք	1	270	270
89.	Նիշավորող մեքենա	1	870	870
90.	Նիշավորող մեքենա	1	10 565	10 565
91.	Էլեկտրական հոսանքի կարգավորիչ	7	133	932
92.	Կինոպրոյեկտոր	1	69	69
93.	Դիապրոյեկտոր	1	122	122
94.	Փոշեկուլ	1	30	30
95.	Էլեկտրական կամին	1	4 049	4 049
96.	Էլեկտրական կամին	1	18 468	18 468
97.	Պատի ժամացույց	1	46 170	46 170
98.	Համակարգիչ	1	41 580	41 580
99.	Համակարգիչ	10	1 309.5	13 095
100.	Համակարգիչ «ԻԲՄ»	3	106 768	320 304
101.	Նոթբուք-486	1	1 713 180	1 713 180
102.	Համակարգիչ	8	522 522	4 180 176
103.	Համակարգիչ «Նոթբուք»	1	1 073 870	1 073 870
104.	Համակարգիչ «Պենտիում II-350»	2	573 584	1 147 168
105.	Համակարգիչ	3	1 852 300	5 556 900
106.	Համակարգիչ «Նացիոնալ»	5	532 383.4	2 661 917
107.	Տպիչ սարք «Նոթբուք»	1	203 950	203 950
108.	Տպիչ սարք	1	600	600
109.	Տպիչ «Լազերջեթ-1100»	2	401 509	803 018
110.	Տպիչ	3	141 173.3	423 520
111.	Լազերային տպիչ	9	596 820	5 371 380
112.	«Սմարթ» մարտկոց	6	181 482	1 088 892
113.	Դիջիդայզեր	6	131 138	786 828
114.	Դիսպետչերական կապի հանգույց	1	55 556	55 556
115.	Նիշավորող մեքենա	1	69 200	69 200
116.	Քսերոքս «Քպնոն»	1	215 400	215 400

117.	Էքսպոզիցիոն լամպ	1	16 000	16 000
118.	Տվիչ	2	7 000	14 000
119.	Փոկ՝ ատամնավոր	2	7 500	15 000
120.	Գլխավոր հանգույցի շղթա	1	10 000	10 000
121.	Ֆիքսող հանգույցի տաքացնող լամպ	1	10 000	10 000
122.	Օպտիկայի ճոպան	1	5 000	5 000
123.	Սնման աղբյուրի վահանակ	1	10 000	10 000
124.	Համակարգիչ «ՊՍ-300 Պենտիում II»	1	816 500	816 500
125.	Տպիչ սարք «Լազերջեթ-1100»	1	202 093	202 093
126.	Համակարգիչ «Պ III 650»	1	534 300	534 300
127.	Համակարգչի վերակառուցման կոմպլեկտ	1	249 340	249 340
128.	Համակարգիչ «Պենտիում III»	1	615 583	615 583
129.	Սնուցման սարք «ՈՒպսել 4»	1	88 893	88 893
130.	Սկաներ (Սկաներ Մուստանգ)	1	88 893	88 893
131.	Հեռուստացույց «ՏՎ-ՋՎՍ»	1	137 228	137 228
132.	Տեսամագնիտոֆոն «ՎՍՌ (ՍՎՑՀ Ք)»	1	73 337	73 337
133.	Սնուցման սարք «ՈՒպսել 4»	1	88 893	88 893
134.	Սնուցման սարք «ՈՒպսել 4»	1	88 893	88 893
135.	Պատճենահանման սարք	1	266 678	266 678
136.	Համակարգչի մոնիտոր («Պենտիում III»)	1	850 037	850 037
137.	Անխափան սնուցման սարք «ՅՈՒՊՍ 500»	1	77 226	77 226
138.	Համակարգիչ «Նոթբուք»	1	275 012	275 012
139.	Համակարգիչ «Պենտիում III»	1	850 037	850 037
140.	« ՅՈՒՊՍ» մարտկոց	1	77 226	77 226
141.	Բջջային հեռախոս	1	95 043	95 043
142.	Տպիչ՝ լազերային 6Պ	1	388 484	388 484
143.	Տպիչ՝ լազերային 1100	1	270 250	270 250
144.	Անխափան սնուցման սարք «ՈՒպսել 4»	1	90 083	90 083
145.	Սնուցման սարք «ՈՒպսել 4»	1	90 083	90 083
146.	Ֆաքս («Քանոն 13150»)	1	225 208	225 208
147.	Տպիչ՝ լազերային 1100 Ա	1	270 250	270 250
148.	Բջջային հեռախոս	1	264 619	264 619
149.	Տպիչ՝ լազերային 1100 Ա	1	222 393	222 393
150.	Բջջային հեռախոս	1	112 604	112 604
151.	Քոփիեր Քանոն	2	240 000	480 000
152.	Քանոն Մուլտի Պասք 2500	1	325 000	325 000
153.	Տպիչ՝ լազերային 1100 Ա	1	222 393	222 393
154.	Բազմացնող սարք	1	3 408 142	3 408 142

155.	Ֆաքսի մեքենա	1	454 063	454 063
156.	Համակարգիչ «ՊՍ Ասեր Վերիթոն» 7200Դ, Պ-4	14	750 828	10 511 592
157.	Մոնիտոր «Բելինեա 103020, 17»	14	133 352	1 866 928
158.	Սկաներ «ՀՊ 5400Ց»	3	113 059	339 177
159.	Պատճենահանման սարք «Յուտաքս ՍԴ1020»	1	1 727 774	1 727 774
160.	Տպիչ սարք «ՅՈՒՏԱՔՍ ԼՊ 118»	6	310 188	1 861 128
161.	Ֆաքս «ՇԱՐՊ ՖՕ-357»	1	208 400	208 400
162.	Համակարգիչ «ՏԱՐԳԱ», մոնիտոր «ԱՍԵՐ», ստեղնաշար, մկնիկ, 2 սնուցման լար	1	1 887 600	1 887 600
163.	Սեղան՝ ղեկավարության համար	1	15 482	15 482
164.	Սեղան՝ ղեկավարության համար	1	16 000	16 000
165.	Սեղան՝ ղեկավարության համար	2	30 972.5	61 945
166.	Սեղան՝ ղեկավարության համար	4	42 207	168 828
167.	Սեղան՝ ղեկավարության համար	1	42 169	42 169
168.	Սեղան՝ ղեկավարության համար	30	322	9 664
169.	Սեղան՝ ղեկավարության համար	1	238	238
170.	Սեղան՝ ղեկավարության համար	1	48	48
171.	Սեղան՝ խորհրդակցության համար	2	15 000	30 000
172.	Սեղան՝ խորհրդակցության համար	2	25 486	50 972
173.	Սեղան՝ խորհրդակցության համար	2	26 548	53 096
174.	Սեղան՝ խորհրդակցության համար	1	11 312	11 312
175.	Սեղան՝ խորհրդակցության համար	15	214.5	3 218
176.	Սեղան խորհրդակցության համար	2	8 849	17 698
177.	Սեղան	1	38 400	38 400
178.	Սեղան՝ 2 տումբանի	22	11 504	253 089
179.	Սեղան՝ 2 տումբանի	8	20 261	162 087
180.	Սեղան՝ 2 տումբանի	1	13 628	13 628
181.	Սեղան՝ 2 տումբանի	1	923	923
182.	Սեղան՝ ղեկավարության համար	2	11 504	23 008
183.	Սեղան՝ ղեկավարության համար	2	8 000	16 000
184.	Սեղան՝ 2 տումբանի	65	177	11 500
185.	Սեղան՝ 2 տումբանի	9	46 100	414 900
186.	Սեղան՝ 1 տումբանի	2	227.5	455
187.	Ժուրնալի սեղան	1	10 000	10 000

188.	Սեղան հեռախոսի համար	1	483	483
189.	Գրքերի պահարան	10	109	1 090
190.	Գրքերի պահարան՝ 3 մասերից	2	290.5	581
191.	Երկաթյա պահարան	2	9 026	18 052
192.	Երկաթյա պահարան	5	2 493	12 466
193.	Ծրագրավորողի աշխատատեղ (սեղան)	1	169 675	169 675
194.	Երկաթյա պահարան	9	80	723
195.	Երկաթյա պահարան	1	10 476	10 476
196.	Մետաղյա գանձապահարան	1	3 193	3 193
197.	Մետաղյա գանձապահարան	1	10 000	10 000
198.	Մետաղյա գանձապահարան	1	403	403
199.	Երկհարկանի գանձապահարան	1	12 658	12 658
200.	Երեքփեղկանի պահարան	1	27 433	27 433
201.	Պահարան, ստելլաժ	3	30 603	91 809
202.	Ձգեստապահարան	1	43	43
203.	Երկդռնանի հանդերձապահարան	1	10 442	10 442
204.	Հանդերձապահարան	1	192	192
205.	Պատի պահարան	4	478.5	1 914
206.	Երկփեղկանի պատի պահարան	12	480	5 756
207.	Երեքփեղկանի պատի պահարան	12	480	5 756
208.	Պատի փոքր պահարան	1	389	389
209.	Նախամուտք՝ մեծ	1	852	852
210.	Նախամուտք՝ մեծ	1	1 019	1 019
211.	Նախամուտք՝ փոքր	1	453	453
212.	Արգելապատ	1	202	202
213.	Արգելապատ	1	341	341
214.	Պատի տախտակադրվագ	44	33	1 467
215.	Հոլլ (բազմոց, սեղան, 2 բազկաթոռ)	1	883	883
216.	Բազմոց	1	144	144
217.	Բազմոց	1	70 000	70 000
218.	Բազմոց-մահճակալ	1	11 589	11 589
219.	Կահույքի հավաքածու («Ռայմոնդ»)	1	628	628
220.	Փափուկ կահույքի հավաքածու	1	24 255	24 255
221.	Ցուցանշան	1	25 609	25 609
222.	Ջահ	5	72.8	364
223.	Կցուրդ	1	592	592
224.	Կախիչ	2	308	616
225.	Բազմոց	2	153	306
226.	Բազմոց	2	35 000	70 000
227.	Վառարան «Ալլադին»	1	100	100
228.	Հեռախոսի ապարատ	2	5 000	10 000
229.	Գեղարվեստական նկարներ	5	2 956.4	14 782
230.	Գորգ «Էրեբունի» 3 x 4 չափսի	6	1 035	6 210
231.	Գորգ 2 x 6 չափսի	2	1 725	3 450
232.	Գորգ «Էրեբունի»	2	143 358	286 716

234.	Գորգ «Էրեբունի»	2	22 161.5	44 323
235.	Գորգ 2 x 3 չափսի	1	518	518
236.	Գորգ 1.5 x 2 չափսի	2	43 007.5	86 015
237.	Գորգ՝ օգտագործված, 3.5 x 2.5 չափսի	1	236	236
238.	Գորգ՝ օգտագործված, 1.5 x 2 չափսի	1	236	236
239.	Գորգ՝ օգտագործված, 1.5 x 2 չափսի	1	116	116
240.	Գորգ՝ օգտագործված, 1.5 x 2.5 չափսի	1	218	218
241.	Գորգ՝ 3 մ լայնությամբ	7,3մ	5 818	42 469
242.	Գորգ «Էրեբունի»՝ օգտագործված	1	22	22
243.	Ուղեգորգ	20,45մ	218	4 468
244.	Ուղեգորգ	3,43մ	216	741
245.	Ուղեգորգ	193,65մ	163	31 579
246.	Ուղեգորգ	60,55մ	12 633	764 923
247.	Ուղեգորգ, 1.5 մ	5մ	12 612	63 061
248.	Ուղեգորգ, 1.5 մ	33,2մ	2 770	91 971
249.	Ուղեգորգ, 2 մ	4,2մ	1 462	6 141
250.	Գորգ՝ ոչ ստանդարտային, 2 մ լայնությամբ	41,9մ	2 217	92 894
251.	Հանդերձապահարան	2	23 716	47 432
252.	Հեռուստացույցի տակդիր	1	42 000	42 000
253.	Ավտոմեքենա «Վազ-21214»	1	3 440 000	3 440 000
254.	Ավտոմեքենա «Գազ-3102»	1	6 556 000	6 556 000
255.	Ավտոմեքենա «Վազ-21099»	1	2 561 808	2 561 808
256.	Ավտոմեքենա «Գազ-31029»	1	5 200 000	5 200 000
257.	Ավտոմեքենա «Գազ-31029»	1	5 477 500	5 477 500
258.	Ավտոմեքենա «Գազ-3110»	1	4 950 000	4 950 000
259.	Ավտոմեքենա «Գազ-31029»	1	4 300 000	4 300 000
260.	Ավտոմեքենա «Գազ-31029»	1	2 067 000	2 067 000
261.	Ավտոմեքենա «Վազ-2121»	1	4 200 000	4 200 000
262.	Ջրատաքացուցիչ «ՌՍ-3425»	2	60 420	120 840
263.	Հեռախոս «ԿԽ-Տ 3155»	1	48 825	48 825
264.	Հեռախոս «ԿԽ-Տ 3155»	1	34 505	34 505
265.	Ավտոմեքենա «ԳԱԶ-3110»	1	3 762 000	3 762 000
266.	Բաժանորդային կայան	1	490 500	490 500
267.	Հեռախոս «Պանասոնիկ» ԿԽ ՏՍՍ (մեքենա)	1	176 000	176 000
268.	Համակարգիչ «Պ 2350 (64) 8»	1	955 800	955 800
269.	Սկաներ (Մենոտեքս)	1	108 000	108 000
270.	Ֆաքս («Պանասոնիկ-780»)	1	205 200	205 200
271.	ԽՈ ռայտեր Մեմորեքս	1	180 900	180 900
272.	Տպիչ, ԲՋՍ 4650	1	273 000	273 000

273.	Ավտոմագնիտոլա ՌՍ-408	1	86 400	86 400
274.	Քսերոքս ՆՊ 1215	1	972 000	972 000
275.	Համակարգիչ «Ֆիլիպս»	1	944 300	944 300
276.	Կոմուտատոր ԿԳԷ 25-4	1	252 000	252 000
277.	Ավտոմեքենա «ԳԱԶ-3110»	1	3 240 000	3 240 000
278.	Տպիչ «Լազերջեթ 1100-Ս»	1	342 900	342 900
279.	«Պենտիում 350-64 ՏԲ»	1	857 000	857 000
280.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	3 344 270	3 344 270
281.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	2 720 000	2 720 000
282.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	2 773 720	2 773 720
283.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	3 344 270	3 344 270
284.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	3 344 270	3 344 270
285.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	2 720 000	2 720 000
286.	Ավտոմեքենա «ՊԵԺՈ 405»	1	5 140 000	5 140 000
287.	Ավտոմեքենա «ՊԵԺՈ 405»	1	5 140 000	5 140 000
288.	Ավտոմեքենա «ՎԱԶ 21213»	1	3 734 300	3 734 300
289.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	3 344 270	3 344 270
290.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	3 344 270	3 344 270
291.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	3 344 270	3 344 270
292.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	3 344 270	3 344 270
293.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	2 720 000	2 720 000
294.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	3 344 270	3 344 270
295.	Ավտոմեքենա «ՊՐԱՅԴ»	1	2 720 000	2 720 000
296.	Ավտոմեքենա «ՎԱԶ 2106»	1	333 200	333 200
297.	Գրասեղան	3		
298.	Խորհրդակցական սեղան	1		
299.	Կլոր սեղան	1		
300.	Համակարգչի սեղան	1		
301.	Պատի պահարան	3		
302.	Հագուստի պահարան	1	773 333	2 320 000
303.	Լազերային տպիչ	1	152 700	152 700
304.	Ադմինիստրատիվ շենք, Կոմիտասի 35	1	1 401 087	1 401 087
305.	Գրամեքենա «Օպտիմա»	1	1 133	1 133
306.	Գրամեքենա «Յատրան»	2	2 248,5	4497
307.	Գրամեքենա «Ռոբոտրոն»	1	1 885	1 885
308.	Տեսակավորող մեքենա Մ-4	1	3 193	3 193
309.	Թուղթ ոչնչացնող	1	1 255	1 255

310.	Մերեկա Հեռախոսի ապարատ «Т-32»	1	722	722
311.	Կոմուտատոր «Կրոն-40»	1	1 671	1 671
312.	Կապի կայան ՏՄԿ-40	1	5 561	5 561
313.	Տեխնիկական սարք «ՎԱՁ-37»	1	344	344
314.	«ՏԱ» մակնիշի սարք	1	1 897	1 897
315.	«Մոլնիա-2» սարք	2	338	676
316.	Ուղղիչ սարք ՎԵ-60 SO-2	1	474	474
317.	ՍՎՄ «Իսկրա-22»	1	1 206	1 206
318.	ՍՎՄ «Ելկա-50, 43»	2	2 836,5	5 673
319.	ՍՎՄ «Իսկրա-117»	3	1 580	4 740
320.	ՍՎՄ «ՄԿ-44, 59»	3	771	2 313
321.	ՍՎՄ «Իսկրա-108»	1	632	632
322.	Խորհրդակցական սեղան	3	566,3	1 699
323.	Մետաղյա պահարան	8	566,2	4 530
324.	Գրասեղան	3	135	405
325.	Երկզզրոց սեղան	31	446,1	13 830
326.	Սառնարան «Արագած»	1	141 420	141 420
327.	Հեռուստացույց «Գորիզոնտ»	1	2 567	2 567
328.	Հեռուստացույց «Ց-355»	1	2 176	2 176
329.	Խորհրդակցական դահլիճի տումբա	1	412	412
330.	Կոնդիցիոներ «ԲԿ-1500»	5	5 928,6	154 145
331.	Կոնդիցիոներ «ԲԿ-2500»	15	6 806,9	102 103
332.	Սեղան՝ 3 մասից	1	26 967	26 967
333.	Գեղանկար	14	2 956,4	41 390
334.	Ապարատ «ԷՌ-420»	1	70 550	70 550
335.	Երկզզրոց սեղան	3	549,7	1 649
336.	Ղեկավարի սեղան	2	21 238	42 476
337.	Ղեկավարի սեղան	1	24 247	24 247
338.	Ղեկավարի սեղան	2	20 353	40 706
339.	Ղեկավարի սեղան	1	6 602	6 602
340.	Ղեկավարի սեղան	1	20 261	20 261
341.	Սեղան՝ 2 կարճ պահարանով	9	3 732	33 588
342.	Սեղան՝ 2 կարճ պահարանով	1	12 828	12 828
343.	Գրապահարան	4	11 589	46 356
344.	Զգեստապահարան	1	192	192
345.	Գրապահարան	2	110	220
346.	Նիստերի սեղան	1	13 982	13 982
347.	Նիստերի սեղան	1	2 224	2 224
348.	Նիստերի սեղան	1	2 300	2 300
349.	Մետաղյա պահարան	5	2 493	12 465
350.	Սեղան՝ կցվող	1	356	356
351.	Պահարան՝ 2 դռնանի	1	35 397	35 397
352.	Ուղեգորգ (1,5 լայնությամբ)	14,1գծ/մ	12 612	176 568
353.	Ուղեգորգ (1,5 լայնությամբ)	29գծ/մ	9 688	280 952
354.	Ուղեգորգ (1,5 լայնությամբ)	1,6գծ/մ	215	344
355.	Կոնդիցիոներ «Ֆ4-1500»	3	39 183	117 549
356.	Կոնդիցիոներ «Ֆ4-			

	1500»	1	27 163	27 163
357.	Սառնարան «Սնեժինկա»	1	11 957	11 957
358.	Տպագրական մեքենա	1	27 525	27 525
359.	Տպագրական մեքենա	1	22 208	22 208
360.	Տպագրական մեքենա	1	42 476	42 476
361.	Տպագրական մեքենա	1	49 556	49 556
362.	Տպագրական մեքենա	1	34 935	34 935
363.	Դիջի թայզեր	1	131 138	131 138
364.	Համակարգիչ «Ֆիլիպս»	1	522 522	522 522
365.	Համակարգիչ 286	1	41 400	41 400
366.	Համակարգիչ «ՊԷՎՄ-841»	1	21 046	21 046
367.	Լազերային տպիչ	1	596 820	596 820
368.	Տպիչ	1	141 174	141 174
369.	Համակարգիչ «Պենտիում III» - մոնիտոր - պրոցեսոր	1	615 583	615 583
370.	Տպիչ	1	146 385	146 385
371.	Ֆաքս-հեռախոս	1	160 461	160 461
372.	Համակարգչային կոմպլեկտ	1	522 522	522 522
373.	Տպիչ սարք	1	141 173,6	141 173,6
ԸՆԴԱՄԵՆԸ				**182 747 421**

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
13.10.2016, N 1111-Ն	10.11.2016, N 1294-Ն
31.03.2016, N 337-Ն	18.04.2016, N 1294-Ն
21.05.2015, N 543-Ն	04.06.2015, N 1294-Ն
04.06.2014, N 577-Ն	28.06.2014, N 1294-Ն
26.12.2013, N 1494-Ն	28.12.2013, N 1294-Ն
14.03.2013, N 225-Ն	28.03.2013, N 1294-Ն
15.03.2012, N 319-Ն	05.04.2012, N 1294-Ն
25.08.2011, N 1234-Ն	08.09.2011, N 1294-Ն
02.06.2011, N 759-Ն	16.06.2011, N 1294-Ն
26.08.2010, N 1206-Ն	30.09.2010, N 1294-Ն
04.03.2010, N 207-Ն	25.03.2010, N 1294-Ն
08.01.2009, N 3-Ն	22.01.2009, N 1294-Ն
18.12.2008, N 1496-Ն	30.12.2008, N 1294-Ն
11.10.2007, N 1177-Ն	25.10.2007, N 1294-Ն
07.12.2006, N 1756-Ն	26.12.2006, N 1294-Ն

01.06.2006, N 754-Ն	22.06.2006, N 1294-Ն
16.03.2006, N 321-Ն	06.04.2006, N 1294-Ն
20.01.2005, N 31-Ն	09.02.2005, N 1294-Ն
20.01.2005, N 30-Ն	09.02.2005, N 1294-Ն

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան